

891.99
36-58

6205



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

0

19 NOV 2011

Թագավորական Հ. Ա. Ա. Մ. Ա. Ա. Ա. Ա. Ա. Ա. Ա.

831.99 ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵՍԱՑԵԱՆ
3E-58 ԱՅ

ԽԱՆԱԳԻ ՆԵԱՆԴՐԵՔԸ



100/
820

Մ 0 3 Ե Ք 0 1 Լ Ի Վ Ր Ե Փ Ը

Վողովիլ մէկ գործողութեամբ

Երկրորդ տպագրութիւն

Հրատարակութիւն Կարապիտ Աղամեանի

Երևան 1907 թ. 8 ընթացի

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Եւթերական Տուրան ՕՐ. Ն. ԱՊԱՆԵԱՆԻ, ՊՈԼԻՑ. 7-

1907

(96)

110 80/04.12013

28631

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ԱԾԿԱ. — ԾԱՀՔԻ աշշիցին:

ՕՍԵՓ. — 40 տարեկան, լայն շալվար, արխալուղ գօտի,
սապօզներ:

ՓԷՓԻԼ. — սրա կինը — գլուխ կապած:

ՕՍԱՆ. — խնամախօս-պառաւ, սև շորեր. գլուխը փա-
թաթած կամ կապած:

ԳԻԳՈԼԻ. — Օսէփի ծառան. ցանցար մօրուքով երիտա-
սարդ:

ՓԷՇՏՄԱԼՃԵՄՆ. — պիղժակ, գլխին ֆէս, քիթը եր-
կար և մեծ. մօրուք. միջին տարիքով:

ԶՈՒՄՆԱՉԻՆԵՐ.

ՍԵՆԵԿԸ. — Տախտ, սեղան, աթոռներ, և այլն —
ասիտկան ճաշակով:

Настоящая пьеса подъ заглавием „Месть свахи“
разрѣшена г. Главноначальствующимъ для представ-
ленія на сценахъ края.

Ноября 8 дня 1903 г. гор. Тифлисъ.

Տարբերակը հաջուկ է. Սօնան կանգնած է հայելիի ա-
ռաջ, ուղղում է մակերը և երգում «Ա՞խ իմ սիրեկան» երգը:
ՍՈՆԱ. — Ա՞խ, էս մըր մնաց գէղէս, ինչիք ուշացաւ.
գար մի մանէթ մայինց տուել էր, որ գնամ թաղա
վէէր առնեմ. շարաթ օրը Սուրբ Կարապետօքա է. ուրիշ
աղջկերք իրանց ուզած բաներն առել են, ջէր ես կի
վունչինչ չիմ առի (պառզա): Քա, էն անիծած Օսանը
վներզանց լիս նընդաւ. մեր պատուաւոր քաղքցոց թո-
ղել է ու մի ինչ որ կոս է գթել. հա, հա, հա, եարաք
գիտենամ ով է, ինչ սիփաթ ունէ: Օսանն ասում է, որ
միթօմ շատ սիրուն, խելօք ու հարուստ տղայ է: Համա
գէղէս ուփրո լաւ տղայ է ճարել. ով կուլի էն սիրուն
Սերեօժի հատը. ջէհէլ, սիրուն, չինովնիկ, ապելատ-
ները ուսին պլպում ին: Օհ, դուշկա է, դուշկա. շա-
րաթ օրը օբումը կուլի: (Երգում է):

ՏԵՍԻԼ. I.

ՏԵՍԻԼ. II.

ՓԷՓԻԼ. (Ծառապով ներս վազելով). Սօնա, Սօնա, էս-
տի իս, ջալդ, ջալդ, հօրէն Սերեօժին անց է կենում
էրգէն մունդոփիկը հագած:

ՍՈՒԱ.—(Ուրախ) Դըրհւստ, հւր է, հւր է, մի տեսնեմ: (Երկուսն էլ վազում են պատուհանի մօտ և դուր նայում): Հա, գէղի ջան, ինչ սազ է գալիս էրդէն մունդիրը, ինչ պլազում ին ապէլատները: Ինձ անպատճառ սրան կուտաս, չէ դեղի ջան (Համբուրում է ծեռքը):

Փէֆէլ. —Հա, վուրթի, հա, արխէին կաց:

ՍՈՒԱ.—Դէղի ջան, թի կու դրկիս մօցիքուրին:

Փէֆէլ. —Քա չէր մէ մուլափ տու. էտէնց մէրաշ խօմ չի ըլի: Զիս տեսնում, որ էն քօփակ Օսանը բանը խարար է անում, մամիդ խելքիցը հանում է:

ՍՈՒԱ.—Դէղի ջան, դուս արա Օսանին, մամիս էլ խելք հասկացրու, թէ չի յիս կոս չիմ առնի. այ, հիմիկուանից ասում իմ, թէ ինձ Սերիօժին կուտաք, կուտանիմ, թէ չէ ես կուխեղդուիմ:

Փէֆէլ. —Վոյ քոռանամ ես, էտ ինչ իս ասում, գժուիլ ես, ի՞նչէ. խեղդուել կի չէ...

ՍՈՒԱ.—Քաս հաստատ Սերիօժին կուտամ ինձ:

Փէֆէլ. —Հա, վուրթի. օչով չի կարա դաշլա անի էտ բանը. Օսանը կի չէ, որ հազար մօցիքուր գայ, ինձ խելքէս չեն կարա հանի. դու արխէին կաց, Սերիօժին է քու փեսացուն:

ՍՈՒԱ. Մազրամ գէղի ջան, ես որ սսեվար չիմ գիդի, ախը չինովնիկի կնիկը պիտի գիդենայ սսեվար, թէ չէ ամօթ է:

Փէֆէլ. —Ի՞ս, ինչ ես դարդ անում, սսեվար էնքան դժար չէ. օրէս դէնը յիս ու դուն էստի սսեվար կուխօսինք ու կուտովրինք:

ՍՈՒԱ.—Հա, գէղի ջան, լաւ ես ասում, խօսանք, ու սովրինք. թէ չէ համ ուսում չունիմ, համ էլ սսեվար

չը գիդենամ չի ըլի: Զինովնիկի կնիկը մայինց սսեվար պիտի գիդենայ:

Փէֆէլ. —Յիս էլ պիտիմ գիդենայ սսեվար, չունքի չինովնիկի զոքանչ պիտիմ ըլի. փեսիս նընդերնիրը, բարեկամնիրը դիմունանքը կու գիտենան սսեվար, մենք էլ նընանց մօտ սկերևս չենք մնայ:

ՍՈՒԱ.—Մամաշա ջան, դայ մնէ ադին մանէթ վէէր կուպիտ թամամշովի քարվանսարայ:

Փէֆէլ. —Ա՛խ, տի ժուլիկ դէվօչկա:

ՍՈՒԱ.—Դայ, դայ, մամաշա ջան, Սուրբ Կարապետօքա պրիդեստ, մօյ նշանզրէք բուդիտ. պօսլի մամիդասթան գոստի պայդօմ. եա թազա վէէր բուդիմ գերժատ:

Փէֆէլ. —Սիչաս նէտու ադին մանէթ, Աստօծ գիդենայ, նէտու, ատեց պրիդօտ, եա դէնզի կուզիմ:

ՍՈՒԱ.—Դա. դա, մամաշա ջան, մաշ չիթիրի մանէթ վազմի, իշչօ ադին զօնթիկ կուպիմ:

Փէֆէլ. —Տենում իս, վուրթի, էնքան էլ դժար չէ. Չէր մէ հինգ նումուտումը որ էսէնց ինք խօսում, բաս որ ամեն օր խօսինք, խօմ ափիցը ու դեներալի պէս կուխօսինք:

ՅԵՍԻԼ III

(Նոյնք և Գիգօլի)

Գիգօլի. —(Յանկարծ ներս է վազում, փարթուկը կապած, մի ծեռքին սրբիչ, միւս ծեռքին թեփչի) Ախչիկ պարոն, ախչիկ պարոն, հայաթումը մայմուն հն խաղցնում:

Փէֆէլ. —(վախնաւով) Թու աչքը տրաքի հա, տօքեղասը, մէյմուն չիս բաս ի՞նչ իս. մէ հալին թամաշա արէք, կասենաս թոկից փախած մաշխալա ըլի:

ՍՈՆԱ.—Տեսնում իք էս օյինբազին:

Գիգօլի. —Ո՞վ է թոկից փախած մաշխալէն ու օյինբազը դէ, դէ, ինչ էք փիս փիս բաներ ասում, ասկարբիթ անում ինձ. ես համ ցօցիալիստ եմ, համ Դաշնակ, համ կօմիտէ, համ պատրիոտ. խօմ չէք ուղում, որ տեղրօրի ենթարկեմ:

Փէֆէլ. —Կրիմ քու գլուխը, գուրս կորի, գուրս կորի:

ՍՈՆԱ.—Ելի էծերդ մօդ ին ըլի, Գիգօլի:

Գիգօլի. —Բաս որ էդպէսէ, չեմ գնայ (Նոտում է):

Փէֆէլ. —(Պուրս է վազում, մի փայտ բերում ու ընկնում Գիգօլու լսուից): Դուն գժիկ ես, էլ քեզ պահել չեմ ըլի:

Գիգօլի. —Վայ մէ դէգի ջան, վայ մէ դէգի ջան: (Խորսափում է հարուածից, ալս ու այն կողմ վազվում և լեռոյ թեփշին գցում կոտրում ու դուրս փախչում):

ՏԵՍԻԼ IV

(Փէֆէլը և Սօնա)

Փէֆէլ. —Խօ տեսաք, խօ տեսաք սրա օյինբազութինը. էս նօքը խարջ բան է, որ սա է անում: Ախ Օսէփ, ինչ ասիմ որ էսթավուր լաստածին պահում իս: Քանի ջէր ասել եմ—դուս արա սրան. նա կի իրա էշն է քշում: Ի՞նչ է, էս անիծածը խարար բզանութին է անում.—նվէ գալիս գնում, Սերեօժի հետ խօմ չինք խօսում:

ՍՈՆԱ.—Հաշաթ չէ, դէգի ջան, սիրտդ մի շուռ բերի:

Փէֆէլ. —Շուռ, գայ դրա սիրտը հա, գէթաղվա, էս ի՞նչ է. Աստծու պատիժ է: (Սօնալին) Զէն տու

էս գեղին մտածին, գայ մօդ անէ թեփշու կտորնիրը:

ՍՈՆԱ.—(կանչում է) Գիգօլի, Գիգօլի:

Գիգօլի. —(Պուան միջից գլուխը նանելով) Համմէ, ախչիկ պարոն:

ՏԵՍԻԼ V

(Նունք և Գիգօլի)

Գիգօլի. —Չոխին խօմ չունիս բռնած, ախչիկ պարոն. իմ արեւ գիտենայ, մէրաշ սլլատեց ձեռքիցս ու վեր նընգաւ. Մէ շահի գուրս էկէք ջամագրիցս:

Փէֆէլ. —Ելի մասխարութին իս անում, տօ:

ՍՈՆԱ.—Տօ, գետինը մտած, ջալդ արա, թէ չէ մամին կու ասիմ էս բաները:

Գիգօլի. —(Վտնում է և սկսում մաքրել). —Էս սհաթիս կուսրբիմ: Համա, բարիշնա ջան, խազէինիս վոնչինչ չասես:

ՍՈՆԱ.—Տօ, անպիտան, քանի ջէր իմ ասի, թէ ինձ «ջան» մի ասի, դուն ով իս, որ (ուզում է փայտը վերցնել):

Փէֆէլ. —Արի, արի, վուրթի. գրա հետ որ նընդնինք, ջալդ կուպասւիմք: Համ էլ որ միամիտ է ասում, փիս մտքով խօմ չէ ասում: Պայդոմ, պայդոմ, միլի դէգօչկա, նիմնօչկի բախչումը բօլթա տալ ըզգելիմ: (Գիգօլուն) Դէ, դուն էլ աւելի պրծի. իժում սմօվրի ջուրն ածա, հազրի (զնում են):

ՏԵՍԻԼ VI

(Գիգօլի մենակ)

Գիգօլի. —(ծիծաղելով) Հա, հա, ինչ թամա-

շա է ես ու իմ հոգին, մէ աբասի աժէ. իժում խօ էս մէ ջէրը չէ էսէնց. ամէն Ամծու օր էսէնց է. ես պրծնում եմ իմ օյինը, իժում խաղէինն է օյին սալքում ախչիկ պարոնի ու բարիշնի հետ. նրանցը ուփրօ մազալո է: Ես դռան ծակիցը թամաշա եմ անում, ծիծաղում ու թիլանում: Թամամ գաղէթ գցելու օյին է սրանց բանը. ափսոս որ գաղեթչիկ չեմ. թէ չէ անպատճառ գաղէթում կը զրէի ու մի էրկու շահի կը գաղէի: (պառզա): Էս բարիշնէն խօ տեսաք, նշնվելու է. խեղճ առաջ իրանց հարևնի տղի վրայ աչք ունէր. դէղէն իմացաւ ու խիստ հակառակեց: «Յիս իմ ուզած տղին պիտիմ տայ քեզ» բղաւում էր ախչիկ պարոնը: «Զիմ ուզի, չիմ ուզի» լաց էր ըլում բարիշնէն: «Գուզիս. քեզ ով է հարցնողը» ասում էր ախչիկ պարոնը ու բարիշնի գլխին փամփում, կասենաս տօլմա է ծեծում: Էնքան արեց էս զալում ախչիկ պարոնս, որ բարիշնին շուռ տուեց: (Աւրախ) Տօ, մէկ էլ տեհնեմ, էս բարիշնէն ինձ վրայ չը սիրահարուեց: Դիփ «Գիգոլի ջան» էր կանչում: Էլ ինչ ասել գուզէ, որ աշխըրքի ամենաբախտաւոր մարդը ինձ էի կարծում. մէրաշ նօքրութենից աղա պտի դառնայի: Մի օր էլ առայ տասերկու կապէկանոց քնթի աղլուխ ու տարայ բարիշնին պաղարկա, որ միթօմ նրա սրտի խոխուրդը իմանամ ու սէրս յայտնեմ նրան: Էրէսւ թրաշեցի, մազերս խուզեցի, մէքիչ պուդրի քսեցի էրէսխս ու էկայ բարիշնի մօտ: Տօ մէկ էլ որ աղլուխս չը վէկալաւ ու ոտի տակը կմճոր տուեց. շշկլված մնացի: «Գիգոլի ես, գժանոցը կու զրկինք, Սիրիք կու քշիւ տանք» ասեց: Իժում չօքէչօք գնացի ու մեղաց էկայ, ասեցի, որ դէինօքէն միտս էր էկի ու հանաք արի:

Նա էլ անջախ բաշխեց: Դրուստ են ասել մեր պապերը, թէ «Բօշաղան փաշայ օլմազ»: Հիմի էլ ախչիկ պարոնս մի չխովնիկ է ճանկել, ուզում է բարիշնին նրան տայ. էն օրը սազ ու բազ անելիս վրայ հասայ, մատս կծեցի: Համա եփոր խաղէինին ասեմ, դուք տեսէք թամաշէն: (Դրսից լսում է, ոտնածայն). Վայ մէ. ախչիկ պարոնը զալիս է, ջէր ես կի չեմ պրծել: (Ծտապով հաւաքում է ախպր և դուրս վաղում. դռանը ընդհարվում է մըտնող Օսանի հետ ու փախչում):

ՏԵՍԻԼ VII

ՕՍԱՆ.—Վայ գետինը մտնես հա, մուրազդ փորումդ չորանայ, ոչ մինձանաս. տեսաք էս խաթէն: Լաւ է, որ գէյրէս չը պատռուից: (պառզա) Էս լաւ է, տանեցիք էստի չին. ախմէ ջալդ զայ Օսէփը:

ՏԵՍԻԼ VIII

(Օսան և Գիգոլի)

ԳԻԳՈԼԻ.—(ղանղաղ մտնելով) Գիյոլա, հւմ ես ուզում:

ՕՍԱՆ.—Տօ հարամզագա, չիս կանս, մարդավարի ժաժ գայ, էշ կերելիս, էշ մենձացի:

ԳԻԳՈԼԻ.—Մեղայ քեզ Աստօձ. հիմի էլ էս քօփակը բերնի կազը կտրեց:

ՕՍԱՆ.— Ո՞ւմնիս ասում քօփակ, տօ գեղացի: Հլամի հալիդ մտիկ, կասենաս ճիբք նընգած խող ըլիս:

ԳԻԳՈԼԻ.—Քեզ խօմ չեմ առնում, որ չես հաւնում: Գնա, գնա, դուս գնա բան չը գողանաս:

ՕՍԱՆ.—Եյ, մամիարա, գողը դուն իս. հւմն իս դուս անում: Գիգիս ես ով իմ:

ԳԻՒԹՈԼԻ. —Պօլկօվնիկի կնիկ կուլիս, բաս չէ:
ՕՍԱՆ. —Տեսէք, տեսէք էս անիծածին. եարաբ
էս թափուրին մնց ին պահում, գէթաղվատ:

ԳԻՒԹՈԼԻ. —Է՞ն, ես քու գլուխը չունիմ, գնամ
ախչիկ պարոնին կանչեմ:

ՕՍԱՆ. —Ախչիկ պարոնին մի կանչի: Յիս նրա
մօտ չիմ էկի. հօրէս Օսէփը գուշայ, նա ինձ դրկից
էստի:

ԳԻՒԹՈԼԻ. —Լաւ, չեմ կանչի. համա՞ դէյդա ջան.
չի ըլի, որ ձեր սէկրէտը ինձ ասես:

ՕՍԱՆ. —Կորի գլխեմէս ուադ ըլի, թէ չէ: Պատ-
ռած վէքսիլ դարձմար, փիէ:

ԳԻՒԹՈԼԻ. —Լաւ, մի չարանա, ես դուս կէհամ.
դուն գիդես, մուլափ տու խազէինին (անում է դէպի
դուռը և ծածուկ ստնում տախտի տակ): Էստեղ մի մենձ
սէկրէտ կայ. բաս ինչկի չիմանամ, չի ըլի. ինձ գիժ
Գիգօլի կասեն:

ՕՍԱՆ. —(նստում է ծալապատիկ, գլխի շալը վար
առնում, փոշտում է երկու անգամ): Խէր, տէր Աստօծ: Ես
իմն անում իմ: Մի օյին խաղամ էս հաստափոր Օսէփի
գլխին, որ իրա միկիտնի դուքնի ճամփէն մուանայ:
Հա, չէր դուք չիք գիդի, թէ բանը ինչումն է: Այ, ձեզ
կու պատմիմ, համա ոչովին չասէք, թէ չէ ձեր գլխին
էլ կու խաղամ էս օյինը: Քա, սրանից չորս ամիս առաջ
մէ չաղ մուշտարի նընգաւ ճանկըս: Եարսուն օխտը
տարեկան մի ախչիկ պտի սալացրել էի մի հարուստ
կուպէցի վրայ:

ԳԻՒԹՈԼԻ. —Տեսէք, տեսէք, էս քաւթառին:

ՕՍԱՆ. —Էդ բանի համար բարըշել էի 15 թու-
ման: Էրկու թումանը գլխանց վի կալայ ու պլաները
էնչնց գցեցի, որ էն էր նշնում պրծնում էի ու 13 թու-

մանը ջէրս դնում: Բա, մէկ էլ էս Օսէփը մուռտառ մկան
պէս մէջ չը նընգամ: Սա ճանչնում էր ախչկան: Մի
տեղ սա էնչնց է խօսել, որ տղի անգաջն էր հասել
իմ սուտը: Էլ ինչ ասիլ գուզէ, որ բանը մօշլա էլաւ,
իմ 13 թումանը կորաւ: Էն օրն էվէտ ուխտ արի Մա-
րիամ Աստօծանսան, օր մի մենձ օյին խաղամ սրա-
գլխին, էնչնց օյին, որ էրազումն էլ տեսած չըլի:
Զէր հլա չի էլ ամանչում, ինձ աղաշում է, որ մէ լաւ
տղայ գլխեմ իր Սօնի համա: յիս էլ գթիլ իմ:

ԳԻՒԹՈԼԻ. —Եարաբ ի՞նչ օյին է խաղալու իմ միա-
միտ խազէինի գլխին:

ՕՍԱՆ. —(ման է զալիս). —Բա վուրդանց որդի մէ
կոս ուաստ էկաւ: նրան համոզեցի, որ մեր քաղքումը
նշնուի, պատուի: ասի, որ յիս լաւ ախչիկ կու գինիմ:
Վուր տեսնէք նրա սիփաթը, սրտներդ կու խառնի: Մէ
քինթ ունէ, մէ քինթ, ոնց որ կպոէ կարաս:

ԳԻՒԹՈԼԻ. —Վայ, մէ, իմ սիրտն էլ խառնում է:

ՕՍԱՆ. —Դունչ, ոնց որ մոփսիկի դունչ: աչքերը՝
փթած ձէթիսխիլի: բեխերը ոնց որ վակսի չօտկի, էլ
էլ ինչ ասիմ: Բաս լեզուն, ոնց հայելվիք է խօսում,
ոնց քրդեվար, ոնց թուրքեվար, մի մլթօ իլիզու: ինքն
էլ ինչոր կօնսուիլ պօվէրն է: Բա էլ ուր իմ հեռու գը-
նում: հօրէս վունց որ սրանց նօքարը. չէր հլա սա
սրանից լաւ է:

ԳԻՒԹՈԼԻ. —Օհօ ես լաւն եմ, բաս ինձ Սօնից լաւ
ախչիկ կուտան:

ՕՍԱՆ. —Էն կոյին ասել եմ, որ մի սիրուն, փո-
ղով ու մուլքով ախչիկ կայ, քեզ համա կուսարքիմ:
Օսէփին էլ ասի, թէ մի սիրուն տղայ իմ գթի, Կոս-
տոյի-պօլէսից, հարուստ է. նոր է էկի. կօնսուլի մին
սելէտարն է:

ԳԻԳՈԼԻ.—Վոյ, դժոխքը գնաս, պառաւ, դժոխքը:
ՕՍԱՆ.—Հալբաթ էս Օսէփի իշտահը բաց էլաւ.
Էլ վուստ դայիմ խփեցի. իրեք թումնի վրայ կանզնեցի:
Էսօր ոնց որ ըլի բանը պրծնելու եմ: Մէ գայ Օսէփը:
Էս ուր մնաց, ուշացաւ, տեսնիմ, էրևում է (գնում է):

ՏԵՍԻԼ IX

ԳԻԳՈԼԻ.—(Դուրս է զալիս տախտի տակից): Խօ
իմացաք, այ խալվը: Հիմի հախը չի, դիփ խարար
տամ-խաղէինիս ու աղչիկ պարոնին: Համա գիտեմ, որ
ինձ չեն աւտայ: Է՛հ, ջնանդամը, ինչ գուզէ ըլի: Փող
դադելու աշխարք է. հալբաթ ես էլ մի էրկու շահի
կը գջւեմ: (Գուրս է գնում):

ՏԵՍԻԼ X

ՕՍԱՆ.—(Ներս է մտնում) Զէ, չի էրեռւմ: (Պառզա) Հիմի
Փէփէլը ինչեր է փիքը անում, որ իրա Սօնին չինով-
նիկի կուտայ. բաս չէ: Ինձ մօցիկուլ Օսան կօնին.
Ինձ համար ախչիկ ու տղայ պսակելը ու քանդելը
վունց որ մէ գթալ բողբաշ խպշտել: Էսքան տարումը
էնէնց իմ դուս կանգնի էս փէշակումը, որ Սաթայէն
ինձմէն մինձ օյինբազութիններ չի գիտենայ: Քոռը,
չոլախը, գիմը—սաղ աղչկայ տեղ իմ անց կացրի: օխտը
կնիկը առած պառաւ մարդին ջէհէլ, խօլոստօյ տղի տեղ
իմ սաղցրի: (Չալներ դրսից) Օհօ գալիս են:

ՏԵՍԻԼ XI

(Փէփէլ ու Սօնան ստում են թեանցուկ) ՍՕՆԱ.—Եա չինովսիկի ժէնա բուդիմ, դմ, մա-
մաշա ջան:

Փէփէլ.—Դա, դա, միլի գէվօչկա, մօյ աչքի լիս:
ՕՍԱՆ.—(Առանձին): Նիմնօժկի պլաս րէժի նա
տվօյ իշտահ:

Փէփէլ.—(Նկատելով Օսանին) Օ՛հ, Օսան, էստի իս:
ՕՍԱՆ.—Բարովի Փէփէլ ջան, վժնց իք, վժնց, մէ
արի սիրուն աղչիկ, (Սօնին) արի պաչ անիմ ճակատդ,
քեզ համա բախտաւորութին իմ բերի:

Փէփէլ.—Զէ, Օսան, չինք ուզի էտ բախտաւորու-
թինը: Ինչի՞ ես իմ մուրազը դաշլա անում. խօմ գիդիս,
որ յիս իմ ախչիկը կոօի ճանգը չիմ գցի: Էն էլ ով
գիտէ, ինչ հանգի կոօ:

ՕՍԱՆ.—Վժնց ինչ ես ասում. քա, չըլի՞ ինձմէն
բէդամաղ իս: Զէր մի իմացի, թէ ինչ հանգի տղայ
է, իժում խօսա:

Փէփէլ.—Խօմ կոօ է, պլծաւ գնաց:

ՕՍԱՆ.—Կոօ է, մակրամ կնիազ է:

Փէփէլ.—Կոօ կնեազը հըն է, քա, լինչ հանգի ես
խօսում. մասխարէն քու գլուխը գցի:

ՍՕՆԱ.—Զիմ ուզի, յիս կոօ չիմ ուզի:

ՕՍԱՆ.—Բեղ հվէ հարցնում, թէ կուզիս, ան չիս ուզի:

Փէփէլ.—Ի՞նչ հանգի իս խօսում, Օսան. բաս քեզ
կուհարցնէնք: Գնա թէ Աստօծ կուսիրիս, գնա էստղանց:

ՕՍԱՆ.—Է՛, գժուիլ իս, խօմ չիս ուզում: Յիս քու
գլուխը չունիմ, քիզ հետ հէսար չունիմ: յիս գիդիմ
ու Օսէփը:

ՍՈՆԱ.—Գնա, գնա. իմ մամին խէլքից մի հանի:
Փէֆէլ.—Օսէփն ով է, նրա բնչ բանն է. յիս նրա
վրայ ուփրօ մինձ իմ:

ՏԵՍԻԼ ԽII

(Օսէփ ներս մտնելով)

ՕՍԷՓ.—Ի՞նչ, ի՞նչ, տօ անիծած, ինձմէն մինձ Բո,
քու պապի արկը գիդենայ. դիմա:

ՕՍԱՆ.—Օ՞չ, Օսէփ, ինչ լաւ էկար, մէ ազատէ
ինձ, է, դէղա ու ախչիկը կինաղամ գղղղեցին ինձ:

ՕՍԷՓ.—Պապա ջան, էս պառաւին դուս արա:

ՕՍԷՓ.—Մուս: Գլխեմէս ռադ ըլէք էնթիօթախը,
յլա բան ունիմ Օսանի հետ, հայդա: (Փէփէլ ու Սօնան
զնում են):

ՏԵՍԻԼ ԽIII

(Օսան ու Օսէփ)

ՕՍԷՓ.—Դուն սրանց անգաջ մի դնի, Օսան, կնիկար-
մատի խելքը չի հասնի էս թափուր բաներին (Նալում է
շորջը): Հա, բաս բանը կու սարքե՞ս էլի:

ՕՍԱՆ.—Հա, Օսէփ ջան:

ԳԻԳՈԼԻ.—(Դուն միջից գլուխը հանելով) Ասիմ,
չասիմ, ասիմ,—չասիմ. չէ, չիմ ասի: Զէր մի սրանց
մասլահթն էլ իմանամ, իժում պլանները գցիմ:

ՕՍԷՓ.—Էս ով է փնթփնթում: Տօ, մաշէնսիկ,
անգաջ իս դնում:

ՕՍԱՆ.—Տեսէք էս օյինբազին: (Գիգոլի փախչում է):

ՕՍԷՓ.—Համա, Օսան դուն ու քու հոգին, լաւ
աղայ ըլի, թէ չէ ձեռքէմէս չիս պրծնի:

ՕՍԱՆ.—(առանձին) Արա տես վաւնց կու պրծնիմ.
(Նրան) —Վա, էտ ի՞նչ իս ասում, Օսէփ ջան, մի էրկու
թումնի խաթեր հոգիս պիտիմ ծախի՞.. ինձ մէկէլ մօթ-
րէուլ մօցիքուլներէմէն չը գիտենաս, յիս պաշօտնի մօցի-
քուլ իմ. ինձ մօցիքուլ Օսան կոսին:

ՕՍԷՓ.—Ի՞նչ փէշակի է տղէն, մոռացայ:

ՕՍԱՆ.—Ասի, որ կօնսուլի մինձ սէկլէտարն է
(առանձին) էս կի չէ պուճուր պօվէլըն է (Օսէփին). համա
գիղիս թէ խէր կու տեսնիս, Օսէփ. էլ ինչ կուղենաս,
կօնիս. քեզմէն մինձ մարթ էլ չի ըլի քաղքումը:

ՕՍԷՓ.—Լաւ, լաւ (պառուա): Օսան, լօթիանա,
հէնց էսօր գնա բեր նրան, թող ծանօթանանք:

ՕՍԱՆ.—Ռւփրօ լաւ, կէհամ կու բերիմ, համա—ը ըը
մէ թուման տու փայտօնի փող, մնացածն իժում:

ՕՍԷՓ.—Էս սհաթիս (հանում է քսակը):

ՕՍԱՆ.—(առանձին) Բանս աջող գնաց. մէ թումանն
առնիմ, իժում կի յիս գիղիմ:

ՕՍԷՓ.—Համեցէք. հալալ ըլի. ջէր էս բանը գը-
լուխ բի, մնացածն էլ յիս գիղիմ:

ՕՍԱՆ.—(Վերցնում է փողը) Դէ, բաս էս սհա-
թիս գնում իմ. ոնց որ ըլի կու բերիմ. դուն կնկանդ
հետ խօսա, որ բանը խարար չանի. հազրուեցէք, գու-
քանք. (առանձին) հիմի կի տեսէք խարարը:

ՕՍԷՓ.—Լաւ, լաւ (Օսանը զնում է, իսկ Օսէփը մըտ-
նում է միւս սենեակը):

ՏԵՍԻԼ ԽIV

ԳԻԳՈԼԻ.—(Ներս վազելով) Ա՛լի, թէ էս մօցի-

քուկների դատաստանը ինձ կուտան, սրանց հոգին ջէր եարասուն ջէր մազութի կարասը կը կոխեմ, իժում դժոխիքի ամենաներքի էտաժը կը զրկեմ: Էս ի՞նչեր են անում. դէ դուք ասեցէք: Համա դրանով ի՞նչ փող են դադում: Զէ ախտէր իմ աշքը վախեցաւ, ես վարդապետ պտի դառնամ: (Ատնածայներ) գալիս են (Դուրս է վազում):

ՏԵՍԻԼ ԽՎ

(Ներս են մտնում Օսէփ, Փէփէլ և Սօնան)

ՕՍՀՓ.—Այ կնիկ, չէր մի իմացի, իժում խելքիդ զոռ տու, չիս իմանում, որ կօնսուլի սէկլէտարն է. ամսէնը 25 թուման ջամագիր ունի, կօսէ. դամանի կառուտ: Հիներ:

Փէփէլ.—Մաշ որ կոս է:

ՕՍՀՓ.—Ճօ, կրօն որն է. ի՞նչ իս դուս տալի. կոս աշխարքիցն է, համա ինքը կոս չէ. հիմի յիս որ հաւլաբրեցի իմ, փիս մարթ ի՞մ, պակաս մարթ ի՞մ: Օսանը նրան խափել է, որ միթօմ փող ու մուլք իմ տալիս: ՍՕՆԱ.—Ապէլատներ ունէ, մամա:

ՕՍԱՆ—Հալքաթ ապէլատներ էլ կունենայ, վուրթի:

ՍՕՆԱ.—Յիս խիստ իմ սիրում չինովնիկ:

ՕՍՀՓ.—Չինովնիկ ասիր ու պրծար. հէնց գիգիս էս մեր քաղցած չինովնիկներէն է, որ մկները ջիբումը սկաչկա ին անում:

Փէփէլ.—էտէնց մի ասի, դիփունանք իօմ էտէնցչին:

ՕՍՀՓ.—Դէ, ջալդ, ի՞նչ որ է, յիս գիգիմ. իմ ախչիկը տալիս եմ էս տղին. էսա գալու է, թազա շորերը հագէք:

Փէփէլ.—(շփոմուելով) Ի՞նչ, ի՞նչ, էտէնց ձեռաց, յիս չիմ կանա կոսի զօքանչ դառնամ:

ՍՕՆԱ.—Յիս էլ կոսի կնիկ չիմ կանա դառնայ: ՕՍՀՓ.—Սրանց մտիկ տուեք. տօ, իմ ախչիկը ում ուղիմ կուտամ. իմ ապրանքը չէ:

Փէփէլ.—Զէ, քու ապրանքը չէ. ախչիկը դէդինն է, տղին մամինը:

ՕՍՀՓ.—Տուտուց-տուտուց մի գուրս տայ, թէ չէ խօմ գիգիս:

ՍՕՆԱ.—(լաց լինելով) Ալսր մի ինձ էլ հարցրէք է, յիս խօմ օչխար չիմ, որ ծախում իր:

ՕՍՀՓ.—Զէնդ կարէ, թէ չէ ձեռաց վուտիս տակը կուցցիմ, կատէտ կուշինիմ: Ո՞վ է իմացի, որ ախչիկը խօսի մամի դէմ, ան սրան ուղէ, ան նրան չուզէ: Զէ, չէ, շատ խարար ըլաւ ժամանակը:

Փէփէլ.—Յիս իմ ախչիկը իմ գիտցած տղին պիտի տամ:

ՍՕՆԱ.—Յիս իմ հաւնած տղին կուառնիմ, թէ չէ ու չիմ պսակիի:

ՕՍՀՓ.—(վեր է կննում եւ ուղարկում է երկուախն էլ ծեծել) Վհւնց թէ չիք ուղի, յիս իմ տղամարդը թէ դուք, այ թէ չիք ուղի:

ՏԵՍԻԼ ԽՎI

ԳԻԳՈԼԻ.—(աւելը ծեռին ներս վազելո) Բախչի, բախչի, խաղէյին ջան, բախչի:

ՍՕՆԱ. Եհ Փէփէլ.—Գուղինք, գուղինք, գուղինք:

ՕՍՀՓ.—Այ էտէնց: ի՞նչկլի կնկտէրանց էս օխնած մուշտին չը շանց տաս, նրանց էծերը չին փախչի: (Գիգոլուն) Ճօ, դուն էլի մուռտառ. մկան պէս մէջ նընգմար. դուրս կորի:

ԳԻԳՈԼԻ.—Խաղէյին, էկայ բարըշեցնիմ:

ՕՍՀՓ.—Դուրս, հարամզագա, մինք տէրտէր չինք ուղի: Գնա կարդինկէն վէ կալ, արի: (Գիգոլին գնումէ):

ՏԵՍԻԼ XVL

(Օսէփ, Փէփէլ և Սօնա)

Փէփէլ.—Ասում իս, հարուստ տղայ է, Օսէփ:

ՕՍԷՓ.—Հա, ա կնիկ. չիս իմանում. բաս յիս իմ ախչկայ դուշմանն Բմ: Լաւ որ չըլի, չիմ տայ: Ախը մէ փեքը արէք, թէ ինչ բախտառութին կուգթնինք. օրէսդէնը կօնուլն ու նրա մարդիքը արազն ու գինին ինձմէն կու տանին. իմ ու քու պատիւը կուաւելանայ. Էն որ յիս ու գուն մեր փէսի ու ախչկայ հետ կարէտումը ձգված անց կու կենանք իմ դուքնի առջնուլք. դիփունանք կու արմանան, բաս էտ ոչի՞նչ:

ՍՕՆԱ.—Մամա ջան, թրիատր, օրա, Բատանսկի բաղը կուտաննէ:

ՕՍԷՓ.—Մաշ, բասնա առանց էտոնց վհւնց կապրի: Փէփէլ.—Մենք էլ ջալդ ջալդ կէնանք դուքանք:

ՕՍԷՓ.—Մաշ, բաս խօմ չինք խոռվի (Ոտնածպննը): Դէ, դէ, էկան. գնացէք հագէք. ջալդ: (Փէփէլ, Սօնա վազում են միւս սենեակը. Օսէփն էլ զնում է ընդունելու հիւրին):

ՏԵՍԻԼ XVL

(Նիրս են մտնում Օսան, Օսէփ, Փէշտմալծեան և Գիգօլին կարգինկով):

ՕՍԷՓ.—Համեցէք, համեցէք, պարուն:

ՓէշՏՄԱԼԾԵԱՆ.—Բարի տեսութիւն, էֆէնզըմ:

ՕՍԱՆ.—Համեցէք, համեցէք վուրթի, մի ամանչի, էնէնց ժաժ արի, ոնց որ ձիր տանը: (Առանձին) Զը ծիծաղէք, զէթաղվա:

ՕՍԷՓ.—Նստի պարուն (Ամոռ է տալիս):

ԳԻԳՕԼԻ.—(առանձին) Քնթին մտիկ արէք, կասենաս պամիգօրի քթոց ըլի:

ՕՍԷՓ.—(Գիգօլին) Տօ, կարգինկով նւր էս նեքսն էկի: Գնա դախլդարիս ասա, որ մէ վէգըա լաւ գինի դրգի, կալքաս, մօթալ, կանանչի, բոնկը. ջալդ վազի:

ԳԻԳՕԼԻ.—Էս սհաթիս խագէյին (զուրս է լազում):

ՕՍԷՓ.—Օսան, նստի. ինչի ես կանգնել. նստի մէ պստիկ քէփ անենք էս պարունի հետ,

ՕՍԱՆ.—Զէ, չիմ կանա Օսէփ ջան, դուք խօսացէք ձեր գործի մասին: Յիս բան ունիմ, պիտիմ գնամ:

ՓէշՏՄԱԼԾ.—Կեցէք հոս, կաղաչեմ:

ՕՍԷՓ.—Վա, էտ ո՞նց կուլինստի թէ Աստօճ կուսիրիս:

ՕՍԱՆ.—Զէ, ձեր ազիզ արեը, չիմ կանա: Հաջաթչէ, հալբաթ հալբանիքին լաւ քէփ կօնիմ: Հիմի մէ ախչիկ պիտիմ շանց տայ մէ տղի:

ՕՍԷՓ.—Լաւ, դուն գիգիս, Օսան:

ՕՍԱՆ.—Մնացէք բարով, դօսվիդանի: (առանձին) Դէս հիմի դուք տեսէք թրիատրը (զնում է):

ՏԵՍԻԼ XIX

(Փէշտմալծեան և Օսէփ)

ՕՍԷՓ.—Շատ ուրախ եմ պարուն, որ լայեղ արիր իմ օջախը էկար. հալբաթ յիս էլ մարթ իմ, իմ շնորքը կու շանց տամ:

ՓէշՏՄԱԼԾ.—Դոհ, եմ վիճակէս, քանզի համեստ օրիորդ մը տեսնելու եմ և վստահ եմ, որ անիկա ապագային արժանաւոր կնիկ ըլլալու է:

ՕՍԷՓ.—(առանձին) Էս ինչ թունդ է խօսում, տօ, իմ արեը, վուչինչ չիմ հասկանում. (Նրան) էտէնց է,

դրուստ է: (Առանձին) Վահ, էս ինչ մէնձ քիթ է ունեցի,
տօ. մաղութիւ բօչկան է, էս Սօնէս խօմ կու վախենայ:
ՓէՇՏՄԱԼԾ.—(շուրջը դիտելով) Այս ձեր սեպհական
տունն ըլլալու, անանկ չէ:

ՕՍԻՓ.—Հա, վաշի բլաղարօդնի, էս իմ սօբստ-
վէնի իմէնին է, էնդի բախչա էլ ունիմ, բազումը մէ
միկատնի դուքան էլ ունիմ:

ՓէՇՏՄԱԼԾ.—(առանձին) Բան մը չեմ հասկընար.
(Նրան) Ուրախ եմ, ուրախ եմ:

ՕՍԻՓ.—Բատօնօ, մինավատ, անումդ ի՞նչ է:

ՓէՇՏՄԱԼԾ.—Գառնիկ:

ՕՍԻՓ.—(առանձին) Ավասու որ ինքը էծի նման է.
(Նրան) Ի՞նչ փէշակ ունիս:

ՓէՇՏՄԱԼԾ.—(առանձին) Ի՞նչ ըսեմ, ձեզի կը հար-
ցնեմ: (Նրան) Բաւականին արդիւնաւոր պաշտօն մը
ունիմ քօնսուլին քովը և անոր անմիջական համակ-
րանքն ու սէրը կը վայելեմ:

ՕՍԻՓ.—(առանձին) Ի՞նչ է ասում, չիկ վուչինչ
չիմ հասկանում: (Նրան) Հա, սէլլէտար ես, չէ:

ՓէՇՏՄԱԼԾ.—Այո, այ՞ո:

ՕՍԻՓ.—Պարուն. ինչ ասել գուզէ, որ օրէսդէնը
ինձմէն պիտի առուտուր անեն ձեր մինձաւորները—
տրաղ, գինի, րօմ, կանեակ, զուբրօվկա, դիփ զագրա-
նիչնի ունիմ. քու խաթեր ձեզ էժան կու հէսար անիմ:
ՓէՇՏՄԱԼԾ.—Աղէկ, աղէկ, շատ աղէկ, ես անանկ

բան մը կընեմ, անհոգ եղէք:

ՕՍԻՓ.—Պարուն, դուն մէ քիչ նստի, գալիս իմ:
Հօրէս կնիկս ու ախչիկս էլ դուս գուքան (զնում է):

ՏԵՍԻԼ Խ

(Փէշտմալչեան մեեակ)

ՓէՇՏՄԱԼԾ.—Աղբար, աս երազ է, թէ իրականու-

թեան մէջ կը գտնվիմ: Հազիւ ամիս մը կայ իմ հսո
գալս, աղւորիկ աղջիկ մը պիտի առնիմ կնութեան: Բայց
ի՞նչ տարօրինակ բաներ կընեն աստեղաց խնամախոս-
ները, որք «մօցիքուլ» անունը կը կրեն: Սա իմ «մօ-
ցիքուլ» ալ ինձի քօնսուլական միծ պաշտօնեայ մը
ներկայացուցած է, մինչդեռ խոհարարութիւնս ալ լաւ
չեմ գիտեր: Ի՞նչ և իցէ, սպասենք վերջաւորութեան.
ինձի կնիկ մը պէտք է. որքան շուտ ամուսնամ, այն-
քան աղէկ կըլար Բայց գիտէք, թէ որքան սիրեցի սա
Թիֆլիզին աղջիկները: Անոնք շատ քնքոյշ են, նազելի
են, և երբ սանկ-սանկ (ծեւեր) կը քայլեն, խելքս գլխէս
կառնուն: Աշար սա նշանածս ալ սիրուն է. (մօտենում է
նալելուն): Ա՞խ, անիծեալ քիթ, դու ինձի պիտի խայ-
տառակես աներանցս առաջ: Կըսեն աստեղաց քիթիշ-
ները հրաշքներ կը գործեն, անպատճառ պէտք է քի-
թըս պղտիկցնել տամ:

ՏԵՍԻԼ Խ

(Գիգօլի ներս է մտնում ու ծիծաղում)

ԳԻԳՕԼԻ.—(առանձին) Էստի մտիկ, լօթիանա, հա-
լլէն էլ կը վախենայ սրա սիփաթիցը: (Նո ոն) Պարոն,
էս քանի օր է, մեր հալլէն խարաբ է էլի, մէջը մտիկ
անողի քիթը մէնձ է շանց տալիս:

ՓէՇՏՄԱԼԾ.—Այո, ի՞նչ վիբաւորական ակնարկ-
ներ կընես, տիմար:

ԳԻԳՕԼԻ.—Ի՞նչ ագռաւներ:

ՓէՇՏՄԱԼԾ.—Ագռաւը դու ես, յիմար, դու ինձի
կը ձանչնամ ով եմ.

ԳԻԳՕԼԻ.—(առանձին) Ասիմ, թէ կօնսուլի պօվէրն
ես, չէր վախտը չի: (Նրան) Էնէնց ասի, պարոն, մի չա-
րանա. ես քեզ չը ձանանչեցի. համեցէք, նստեցէք

(աթոռ է տալիս եւ ինքն էլ նրա մօս նստում): Դուն պըտի ուղիս իմ խազէինի ախչկան, պարոն:

ՓէՇՄԱԼԾ.—(առանձին) Ասօր լրբութեան նայեցէք.

ինձի կը ծաղրէ Բայց ի՞նչ ընեմ, ստիպուած եմ լը-
ռել, եթէ ոչ գլխուս փորձանք մը կը բերէ: (նրան)

Դուն հոս ի՞նչ պաշտօն ունիս:

ԳԻԳՈԼԻ.—Ե՞ս, Ես (առանձին) Ի՞նչ ասեմ. (նրան)

Ես իմ խազէինի լիճու տղէն եմ:

ՓէՇՄԱԼԾ.—Ուրեմն ազգակմնն ես պ, Օսէփին,
աղէկ, աղէկ: Այս ի՞նչու տիկինն ու օրիորդը չեն դուրս
եներ:

ԳԻԳՈԼԻ.—(առանձին) Ոնց է վրազում, ով գիտէ
սիրտը գմբդմբում է: (նրան) Ես սհաթիս դուս գուքան,
հէստի սիրուն բարիշնա է, հէստի նէժնի. պօրտօպիան
ածել գիտէ: (առանձին) Էն կի չէ էրազումն էլ չի, տե-
սել պօրտօպիան. (նրան) Էլ, էլ ինչ ասեմ. երկնքեմէն
գէվէր էկած հրեշտակ:

ՓէՇՄԱԼԾ.—Աղէկ, աղէկ, շատ ուրախ եմ:

ԳԻԳՈԼԻ.—Հարցնելը ամօթ չըլի, դուն ի՞նչ փէ-
շակ ունիս. աղվոկատ, դօխտուր. սապօժնիկ:

ՓէՇՄԱԼԾ.—Ես ամեն բան կը հասկընամ:

ԳԻԳՈԼԻ.—Մաշ դօխտուրութին էլ կը գիդենաս:

ՓէՇՄԱԼԾ.—Բաւականաչափ գիտեմ:

ԳԻԳՈԼԻ.—(Հանում է աջ ոտք եւ մօտեցնում է նրան)

Ա՛խ, պարոն դօխտուր, էս ոտիս վրայ մէ մինձ մազօլ
կայ, մի տես:

ՓէՇՄԱԼԾ.—(զայրանուն է) Խենթ Ես, ի՞նչ է,
հայրան (Գիգոլին փախչում է):

ՏԵՍԻԼ ՀՀՀ

(Ներս են մտնում Փէփէլ եւ Սօնա)

ՓէՓէլ.—Բարով, պարուն (բարեւուծ են):

ՓէՇՄԱԼԾ.—Բարկ, համեստափայլ տիկին, սիրուն
օրիորդ, բարի ըլլայ մեր ծանօթութիւնը:

ՓէՓէլ.—(առանձին) Վայ քոռանամ յիս, էս ինչ
մէնձ քիթ ունէ, (նրան) Ո՞նց ին գործերդ:

ՍՕՆԱ.—(առանձին) Վայ մէ գէղի ջան, յիս պիտիմ
սրա կնիկը դառնամ:

ՓէՇՄԱԼԾ.—Ծնորհակալ եմ, տիկին. գոհ ըլլալու
եմ Աստուծմէ, քանզի քօնսուլի քով մեծ պաշտօն ունիմ
և խոշոր ոռնիկ: (կողմ) Ճիշտ որ բաւական աղւոր ախ-
չիկ է:

ՓէՓէլ.—(առանձին) Քինթը հաջաթ չէ, քանի որ
փողաւոր ու մինց մարթ է: (նրան) Հալբաթ էս էր իմ
Սօնիս ճակտի գիրը, որ քեզ պէս մի մէնձ մարթ
ուսատ գար:

ՍՕՆԱ.—(կողմ) Մաշ չը էս իմ ճակատի գիրը, որ էս
թավուր բայդուշին առնեմ: Ափսոս իմ սիրուն Սերեօժա:

ՓէՇՄԱԼԾ.—Նազելի օրիորդ, ինչու չէք զրցեր
և մելամաղձուտ նստած էք:

ՍՕՆԱ.—(Թթու ղէմքով) Ի՞նչ է ասում, քրդէվար է
խօսնում: (նրան) Զիմ իմանում, ինչ իս ասում:

ՓէՓէլ.—Պարուն, Սօնէս խուրը գրափսր չի գիդի,
չունքի գիմնազիիցը գուրս բերի: Զէր հայ ուփար խօսա:

ՓէՇՄԱԼԾ.—Ես գրափար չեմ զրցեր, տիկին, ես
աշխարհաբար կը զրցեմ. բայց տարաբախտաբար մեր
լեզուն ձերինի պէս չէ:

ՓէՓէլ.—(Սօնին) Ախչի, ի՞նչ իս մոռւթդ քաշ
արել. ծիծաղէ: (նրան) Հաջաթ չէ. իժում դուն մեր
լիզուն կուսովորիս, մինք քու լիզուն:

ՍՕՆԱ.—(կողմ) Ախ, գետինը մանէիր քոփակ
Օսան, որ էս մէյմունին էստի չը բերէիր: Վէկենամ
դուս անեմ, մամիցս վախումիմ:

ՓէՇՏՄԱԼԾ.—Մի ամչնար, օրիորդ, խօսէ խօսէ:
ՓէՓէլ.—(Սօնին) Խօսա, թէ չէ Աստօծ գիղենայ
իժում թիքա թիքա կօնիմ:

ՍՈՆԱ.—Ի՞նչ խօսամ, դուք խօսում էք էլի՞:

ՓէՓէլ.—Պարուն, հէր, մէր, ախպէր ունիս:

ՓէՇՏՄԱԼԾ.—Հէջ բանմալ չունիմ, անոնք վաղուց
մեռած են:

ՓէՓէլ.—(կողմ) Օխայ, ինչ իմ փանդը փեսայ իմ
ճանգի: (նրան) Դու սաղ ըլիս, էրդէն արև ըլիս ու
քու կնկայ համա շատ ապրիս:

ՍՈՆԱ.—(կողմ) Էրնէկ էս նիմուտիս գետինը մըտ-
նի, պրծնիմ:

ԳԻԳՈՒԼԻ.—Ո՞նց սարթ է էզ կօնսուլը: Կնիկ ունէ:

ՓէՇՏՄԱԼԾ.—(առանձին) Գուցէ ինքն ալ քօնսու-
լին սիրել կը մտածէ: (նրան) Այո, կնիկ ալ ունէ, ախ-
չիկ ալ, մանչմ ալ:

ՓէՓէլ.—Իժում մեզ էլ կու ծանօթացնին նրանց
հետ, կէհանք, դուքանք:

ՍՈՆԱ.—Լուս խաղալ գիդին:

ՓէՇՏՄԱԼԾ.—Այո, այն, ստէպ-ստէպ կը յաճա-
խէք, լօթօ ալ կը խաղաք, քարթ ալ:

ՓէՓէլ.—Ախը մի ասա, քու անումն ինչ է:

ՓէՇՏՄԱԼԾ.—Գառնիկ Փէշտմալճեան:

ՓէՓէլ.—Վոյ քուանամ իս, փէշտմալը ո՞րն է:
(նրան) Լաւ անում իս ունեցի, թամամ սազում է քիզ:

ՓէՇՏՄԱԼԾ.—(կողմ) Օհօ, աս կինն ալ կը ծաղրէ զիս:

ՍՈՆԱ.—(կողմ) Էհ, որ հարուստ է, կու առնիմ

սրան, ի՞նչ կուլի կուլի. քիթը խօմ ինձի չի՞ ուտի:
ՓէՓէլ.—Հիմի կի քիչ պարզը խօսանք, բատօնօ
ջան: Դուն հաւնում ի՞ս իմ Սօնին: Համա գիդիս սաղ

Թիփլիգումը իմ Սօնի հատը չը կայ. սիրուն, ինելք,
հունարժվ: Որ իմանաս նրա քաղցր ուսեվար խօսալը,
կու գժուիս:

ՓէՇՏՄԱԼԾ.—(մի կողմ) Գմաւելու տրամադրու-
թիւն բնաւ չունիմ:

ՓէՓէլ.—(Սօնին) Աբա, Սօնա, ուսեվար վրա տու:
ՍՈՆԱ.—Կակ պաժիկաիշ, կակ վաշի զդարօվի:

ՓէՇՏՄԱԼԾ.—(առանձին) Սատանան տանէ, սա
ինչ փորձանքի մէջ ընկայ, հէջ խօսքմալ չիդեմ: (նրան)
Ըըլ, թի բրասիվի, պօջուստա:

ՓէՓէլ.—Դա, դա, գասպարին Գառնիկ, մօյ դօյ ո-
չին կրասիվի: (վեր կենալով) Վի նիմնօկի մասլահաթ
դէլիտէ, եա սիչաս պրիդօմ: (Սօնին) Սօնա, մի ամանչէ:

ՏԵՍԻԼ ՀՀԽIII

(Փէշտմալճեան եւ Սօնա)

ՓէՇՏՄԱԼԾ.—(առանձին) Վերջապէս սանկ սիրուն
կին մը պիտի ունենամ: (նրան) Նոնոշիկս, մի ամչնար
ինձմէն, վասն զի ես քոնն եմ, դու իմս:

ՍՈՆԱ.—(առանձին) Ա՛խ, էս ինչ կրակն ընկայ,
տէր Աստօծ:

ՓէՇՏՄԱԼԾ.—Որքան գեղեցիկ աչքեր ունիս. նազե-
լիս: Յուսամ, որ աղէկ կնիկ պիտի ըլլաս, թոթոշիկս:

ՍՈՆԱ.—Կօնսուլի մօտ չինովիկ իմս:

ՓէՇՏՄԱԼԾ.—Այո, հոգիս, քօնսուլին չինովիկ եմ:

ՍՈՆԱ.—Մաշ ուր ին ապէլատներդ:

ՓէՇՏՄԱԼԾ.—Պճսասիրութենէ կը խորշիմ, որպէս
թուրքը խոզի միաէն:

ՍՈՆԱ.—Խոզի միսը սիրում իս, հա. նրա խո-
րովածը համով է:

ՓէՇՏՄԱԼՃ.—(Կողմ) Սա ի՞նչ կըզբցէ, խենթ է,
ի՞նչ է, (Նրան) Ը՛ը, այս խոզի միսը համով է, բայց
ուրիշ բան խօսինք:

ՍՈՒԱ.—Կիրակի օրը քու ապէլատները սարքի,
արի գնանք Մուշտայիդի բաղը:

ՓէՇՏՄԱԼՃ.—(Կողմ) Այս, սա խենթ է, ինձի խա-
րած են:

ՍՈՒԱ.—Ղորթ, ինչքան ունիս ջամագիր:

ՓէՇՏՄԱԼՃ.—Ժամագիր ըլլանք .կըսիս: Ժամի
5-ին աղէկ կըլլայ:

ՍՈՒԱ.—Կօնսուլի դաւթիրներն իս գրում:

ՓէՇՏՄԱԼՃ.—Հոգիս, ես ամեն ինչ կընեմ—վաս-
տարանութիւն, ատենաբանութիւն, բժշկութիւն, խո-
հարարութիւն, թռւն, ի՞նչ ըսի, լեզուս ծոեցաւ:

ՍՈՒԱ.—Դօխտուրութին էլ իս գիդեցի՞. լաւ է:
Գիդիս, ձալոս սրտի թռթող ունէ, դօխտուրնիրը չին
կարում սաղցնի, գուն իքնէքս սաղացնիս:

ՓէՇՏՄԱԼՃ.—Ատկէ դիւրին բան չի կայ. վեր-
ցուցէք քիչ մը քափուստ, գլխուն վրայ ջարդեցէք, քիչ
մալ աղ լցրէք և ըստքիչ մալ քացախ լցրէք, սրտի թըու-
թողը կանցնի:

ՍՈՒԱ.—Էս ռւր մնաց գէղէս (վեր է կենում):

ՓէՇՏՄԱԼՃ.—Ինձմէ կը վախենամս, ի՞նչ է, նոնոյիկա:

ՍՈՒԱ.—Դուն խօմ գէլ չիս, որ վախենամ:

ՓէՇՏՄԱԼՃ.—(Կողմ) Տեսէք, ինձի գայլ ալ շինեց:
(Նրան) Գայլից ալ վախենալու չէ:

ՍՈՒԱ.—Վայ մէ մուկը, մուկը. (Վազում է դուրս):

ՓէՇՏՄԱԼՃ.—Մուկը ըսմաւ, ծօ ես ալ կը վախենամ
աստեղաց խոշոր մկներէն (Նայում է տախտի տակը):

ՏԵՍԻԼ ՀՀՎ

(Գիգօլի աւելը ծեռքին ներս է վազում)
ԳԻԳՕԼԻ.—Ո՞ւր է մուկը, մուր է:
ՓէՇՏՄԱԼՃ.—Ախրար, ասոր տակը կըլենայ, մէմ
լաւ նայէ:

ԳԻԳՕԼԻ.—Տօ, եքա մարթ, չես ամանչում, որ
մկնից վախենում ես, էտէնց պտի կնիկ առնես:

ՓէՇՏՄԱԼՃ.—Ծօ հայվան օղլու հայվան, մում հետ
կը խօսիս:

ԳԻԳՕԼԻ.—Հօրէս մուկը էկաւ, էկաւ: (Աւելով զար-
կում է Փէշտմալճեանի ոտնկըրին ու դուրս վախչում):

ՏԵՍԻԼ ՀՀՎ

ՓէՇՏՄԱԼՃ.—Ախս, անիծեալ խնամախօս, ինձի
թակարդը զցած է: Թէ ձեռքս կընկնիս նէ, իշու պէս
պղիկ-պղիկ կընեմ: Զէ, ախպար, սանկ կարգուելը չեմ
ուզեր. ես վարդապետ դառնալու եմ:

ՏԵՍԻԼ ՀՀՎ

(Դրսից լսվում է դուղուկի ձալն. Օսէփ «Յօդա է քա» եր-
գելով մտնում է դուղուկով)

ՓէՇՏՄԱԼՃ.—Ախրար, սա ի՞նչ կընեն:

ՕՍԷՓ.—Աքա, պարուն փեսացու ջան, մէ թաթա-
րի եախնի քէփ անինք:

ՓէՇՏՄԱԼՃ.—Ախր, պարոն Օսէփ. սանկ բան
չըմար:

ՕՍԷՓ.—Տօ, լաւ, թէ Աստօծ կուսիրիս: Խօմ հի-
մի չինք պսակում, էնէնց քէփ անինք, ի՞նչ կայ էստումը:

Էս ուր ին կորի Փէփէլն ու Սօնէն: Գիգօլի, Գիօլի,
ջալդով կանչի նրանց:

ՕՍէֆ.—Աբա ուստէք, դուք էստի նստեցիք, մէ
քիչ դնջացէք: Փեսայ ջան, դուն էլ նստի, մէ սուփրէն
դժինք:

ՏԵՍԻԼ ՀՀՎԻԼ

(Ներս են մտնում Փէփէլ, Սօնա, Գիգօլի եւ սեղան են սարբում)

ՕՍէֆ.—(Փէշտմալծեանին առանձին) Հա, պարուն
Գառնիկ, խօմ տեսար աղջկաս, հաւնում ի՞ս թէ չէ:

ՓէՇՏՄԱԼԾ.—Ալէկ աղջիկ է, ամուսնանալս հա-
ճոյ է, բայց:

ՕՍէֆ.—Ոնց թէ պաճո է, ով է պաճո (առանձին)
իրա քիթը կի վունչինչ:

ՓէՇՏՄԱԼԾ—Այո, հաճոյ է ինձի անոր կին առնուլս:

ՕՍէֆ.—Հա, պաճո փրանգսուուզէվար լաւ բան կուլի:
(Նրան) Լաւ, լաւ: Հէստի պիտի բախտաւորուիս, որ էլ
էլ, ինչ ասիմ:

Գիգօլի.—Սուփրէն հազիր է, խազէին (առանձին)
հիմի տեսնենք ի՞նչ է դուրս դալիս:

ՕՍէֆ.—Դէ, արա նստինք, համեցէք. պարուն.

Փէփէլ Սօնա էս թէնը նստեցէք:

ՍՕՆԱ.—(առանձին) Թամամ պիտիմ քամբախտանայ:

(Բոլորեքնան նստում են: Գիգօլին կանգնած է դուդուկի մօտ):

ՕՍէֆ.—Աբա լքցրէք ստաքանները, էս իմինք
մեր պատռաւոր դօնախի կինացը: Աստօն մուրազիդ
հասցնէ, բախտաւոր ըլիս: Աստօն արժանացնէ իմ Սօ-
նի հետ թագ ու պասկին: Տուշ, տուշ: (Դուդուկը ածում է.
խմում էն): Աբա, փեսիս կենացի վրայ մէ պիտիմ խաղ
անի: Դէ մի բաղդագուրի ածեցէք: (Պարում է, լուսոյ
նստում): Գիգօլի, էս էլ դուն խմի ու օխնի:

Գիգօլի.—Աստօն ջնահաւոր անէ: Պարոն քու կե-
նացը. ջէր մէ մաղարիչս տու:

ՕՍէֆ.—Այ հարամզաղա, վախտը գթմբ, (ինքն էլ
փող է նուիրում) Առ, էս էլ իմ կողմից:
ՓէՇՏՄԱԼԾ.—(առանձին) Աս ինչ կրակին մէջ եմ
ընկեր, ախ պառաւ խաթուն: (Տալիս է գիգօլուն) առ:

Գիգօլի.—Շէն կենաք, Աստօն իրա օխնանքը
թափի քու գլխին: Սաղ ըլիս: (խմում է եւ դուրս գնում):

ՕՍէֆ.—Փեսայ ջան, մէ ջէր խաղ արա, մի ամանչի:
ՓէՇՏՄԱԼԾ.—Վալլահ, ես պարել չը գիտեմ:

ՕՍէֆ.—(բաշում է) Լաւ, նաղ մի անի, խաղ արա,
էէր օխնած, ախչիկ խօմ չիս, որ ամանչում իս:

ՓէՇՏՄԱԼԾ.—Ե՞ս, օր կստիպէք, ինչ ընեմ, պարե-
լու եմ: Աղբար, չալէք, չալէք, սանկ ծանր պարմը չալէք:
(Ըծում են ջալախօ, Փէշտմալծեանը անծոռնի կերպով պարումէ:
Միւսները ծափանարում են):

ՕՍէֆ.—Այ էտէնց, պրծաւ գնաց: Աբա մէ լը-
ցրէք ստաքանները:

ՏԵՍԻԼ ՀՀՎԻԼ

(Դրսից լսվում է աղմուկ. սրանք լուռ ականջ են գնում—
Գրսում) ՈՄՆ.—Աղբար հոս է էկեր:

Գիգօլի.—Հոս, մոս, չիմ գիգի, իմանում ես:

ՈՄՆ.—Կամ հոս է:

Գիգօլի.—Գնա ուադ ըլի թէ չէ, մէ կինծումդ
կըտամ որ:

ՈՄՆ.—Աղբար մտիր ըսէ Փէշտմալծեանին, որ կը
կանչին:

Գիգօլի.—Ճօ էստի փէշտմալ չեն ծախում: գնա
թուրքի բազաղիանա:

ՈՄՆ.—Աղբար, քօնսուլին պօվէր Փէշտմալծեանը
հոս է էկեր, քօնսուլը կը կանչէ. կըրակուր կայ եփելու:

ՓԷՇՏՄԱԼԾ.—Օվէհ, թակարդն ընկայ, էլ չեմ
ազատուիր:

ՕՍԵՓ, Փէֆէլ, ՍՕՆԱ. —Ի՞նչ, պօվէր:

ՓԷՇՏՄԱԼԾ.—Ան ուրիշին կը հարցնէ. կեցէք ևս
դուրս ելնիմ, տեսնիմ (առանձին) գուցէ կանանամ դուրս
փախչիլ, ազատիլ:

ՕՍԵՓ.—Զէ, չէ, դու նստի յիս տեսնիմ:

ՏԵՍԻԼ ՀՀԼԽ

ԳԻԳՈԼԻ. —Խաղէլին մէ նիմուտ դուրս արի, մարթ
է կանչում. (առանձին) օյինը տեսէք: (Օսէփ ու Գիգոլին
դուրս են գնում: Փէֆէլը ու Սօնան նոյնպէս):

ՓԷՇՏՄԱԼԾ.—Աղբար, թէ հոս բան պատահի նէ,
դուք սարդասէր գտնվէք, ինձի փրկեցէք: Զէք իմանար,
ջանըմ, ձեզի հետ կըդրցեմ:

ՏԵՍԻԼ ՀՀԼ

(Ներս են յտնում Օսէփի ծեռին փայտ, Գիգոլի ծեռին աւելու)

ՕՍԵՓ.—Տօ դրուստ իս ասմում, Գիգոլի:

ԳԻԳՈԼԻ. —Աստօձ գիղենայ, ես դիփ գիղեմ:

ՕՍԵՓ.—Աբա, ուստէք մէ լէզզինկա ածեցէք:
Պարուն փէսայ, մի լէզզինկա խաղանք մէտի. Հըարի
յիս էլ հետդ պիտի խաղամ:

ՓԷՇՏՄԱԼԾ.—Ախր, պարոն Օսէփ, ախ՛ր ը՛բք:

ՕՍԵՓ.—Ախր մախր չիմ գիղի, արի, քեզ ասում իմ: (Փէշտմալծան պարում է: Օսէփ ու Գիգոլին վրայ են ընկնում
ու ծեծելով դուրս անում): Այ քեզ նշնուիլ

Վ Ա Բ Ա Գ Ա Յ Ա

«ԳՈՒԻՏՏԵՆԲԵՐԴ»

ԳՐԱՂԱԿԱՆՈՒԹՈՒՄ ՎԱՃԱՌՈՒՄ ԵՆ

Գ. ՍՈՒՆԳՈՎԿԵՎԱՆԻ

Գիշերվան սաբրը խէր է, կատակերգութիւն
1 ար. բ. տպ. — 30

Օսկան Պետրովիչն էն կինքումը, կատ. 1 ար. — 30

Էլի մէկ զոհ, կոմեղիա հինգ արար. բ. տպ. 1 —

Պէզօ, կոմեղիա երեք արար. բ. տպագրութ. — 50

Ամուսիններ. կոմեղիա հինգ արար. բ. տպագ. 1 —

Էմին Տէր-Գրիգորեանի

Խէչօյի թուզը, Փարս-Վօդըիլ մէկ արարւած. — 30

Մօղա, կոմեղիա մէկ արարւածով — 50

Կոռւապատճառը ևս էի, կոմեղիա-վօդ. մէկ ար. — 50

Էլ չարէս ինչ, կամ երկու սիրահար կա ո. 1 ար. — 50

Սէր կամ մահ, երգախառն պիես մէկ արար. — 50

Զրկանքի զոհ, դրամա 4 գործ. և 6 պատկեր. — 80

Վայրենի, կատակերգութիւն մէկ արարւած. — 50

Բարեգործութեան դիմակի տակ. դրմ. 5 ար. 1 —

Ոճրագործի ընտանիքը և Հերկուէս, (1 գր.) 2 —

Թովհաննէս Մասէհեանի

Իօմէս և Զուլիէտ, Շէքսպիրի ողբերգ. 5 ար. — 60

Ինչպէս կուզէք, Շէքսպիրի թատր. 3 արար. — 50

Վենետիկի	վաճառականը,	Շէքսպիրի	»	—	40
Արքայ լիր,	Շէքսպիրի ողբերգ.	5 արար.	—	50	
Համլէտ,	Շէքսպիրի,	Թարգմանեց Գ.	Բարազեան	1	—
Տիգրանուհի,	դրամա	5 ար.	Լ.	Մանուէլեանի	— 50
Նկարիչ	Թաշճեան,	դրմ.	4 գործ.	»	— 35
Դոկտոր	Երուանդ	Բօշայեան	»	—	50
200000 Փառնակէսի,	կատակ.	1 արարւածով	—	30	
Նիսիա,	»	» Վոդքվիլ մէկ	արար.	—	40
Փառնակէս,	բանաստեղծ,	վօդ.	1 ար.	բ.	տպ.
Ժան-Բօդրի,	Վաքըրի,	Թարգ.	Գլ.	Ֆիլիքս կօմ.	
դրամա	4 գործողութեամբ	.	.	.	— 50
Լիր	Թագաւոր,	Շէքսպիրի,	ողբերգ.	5 արարւածով	
					1 —
Մարիանա,	Խօզէ	Ելեգարայի,	դրամա	3.	և վեր-
ջաբանով	Թարգմ.	Ա.	Կըասին.	.	— 1 —
	Գէորգ Բարիխուգարեանի				
Ֆառւստ.	ողբ.	Գէօթէի,	հեղ.	պատ.	և կարևոր
	ծանօթութիւններով	.	.	.	2 —
Մարիա	Մավարտ,	ողբերգութիւն	5 արարուածով		
	Վիլհելմ Տէլլ.	դրամա	5 գործողութ.	Շիլլէրի	— 50
Դօն Կարլոս,	դրամա.	բան.	Շիլլէրի	5 գործող.	1 —
Օրլէանի	կոյսը,	Շիլլէրի ողբերգ.	5 արարուած	—	60
Նաթան իմաստուն,	դրամատ.	բան.	գործ.		
Լէսսինգի,	թարգ.	գերմ.	.	.	— 60

Յանձնութիւն ծառայութեա Եղանձնի
Ազգային ժողովական մատենական պահպանի պատուի
Հանձնութեա լաւագույն օպերատորական
Հանձնութեա Համակարգութեա տարրական
Հանձնութեա Թուրքիա բարեկանութեա
Հանձնութեա Իրավական բարեկանութեա
Հանձնութեա Պատասխանական բարեկանութեա
Հանձնութեա Սպառազնութեա կամ պարագայութեա
Հանձնութեա Մասնակիութեա կամ պարագայութեա
Հանձնութեա Բարեկանութեա կամ պարագայութեա
Հանձնութեա Վարչական բարեկանութեա

Գլուխ Բարեկանութեա

Հանձնութեա Գլուխութեա կամ հայտնացած պարագայութեա
Հանձնութեա Պահպանութեա կամ պարագայութեա
Հանձնութեա Տուրքական գլուխութեա կամ պարագայութեա
Հանձնութեա Տաշտութեա կամ պարագայութեա
Հանձնութեա Շնութեա կամ պարագայութեա
Հանձնութեա Վագագնութեա կամ պարագայութեա
Հանձնութեա Վարչական բարեկանութեա

11

ՀՀ Ազգային գրադարան



NL0338485

28637